

Hentchak :

Organe Central

DU PARTI

HENTCHAKISTE.

# Հ Ն Չ Ա Կ

Journal Arménien

mensuel

XIX Année

## ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

### ԵՐԿՈՒ ՃԱԿԱՏՈՎ

Յարկվը երբէք իր անկման պատկերը այնքան պայծառ կերպով չէր ընդհանարել, որքան այժմ, և հէնց զրա համար էլ նրա արձակած մտնչիւնը այժմ աւելի սաստիկ է քան երբ և է:— Երբ մի բռնապետութեան ամենահաւատարիմ կարծուած զօրազնդերն անգամ բաց է ի բաց հրաժարուում են ձն շ ու մ ի գործիք դառնալուց, երբ միլիտարիզմի սղմուռ ողբով սրնուած կօզակներից անգամ շատերը ակնյայտնի կերպով մանոււմ են բողոքող, կուռող ժողովրդի շարքերի մէջ. երբ շատ քաղաքների բերրապահ զօրքերն իսկ անաստութեան նշաններ ցոյց տալուց յետոյ՝ իրարու հետ սուխններ են խաչաձեւում. երբ հաղարաւոր նաւաստիներ «անբարեկոյս» դարձած՝ նշանի են սպասում, ու ամբողջ զօրքը որոշ կերպով երկու մասի ձեղքուած, մին արդէն որպէս յեղափոխական բանակ սպասում է իրերի աւելի զարգանալուն՝ որպէսզի իր թնդանօթիները ցարական բաստիլի դէմը դարձնի,— այդպիսի դէպքում շատ հասկանալի և բնական է ցարիզմի մտնչման ուժգնութիւնը:

Լայնատարած սով, ագրարային ընդարձակածաւալ շարժումներ, յեղափոխական ամենայնուզնի գործողութիւններ,— այդ բոլորը ցարիզմի պաշտպաններին ասում են, որ վերջալոյսը մօտենում է:

Սակայն պատմութիւնը ասել է, որ բռնապետութիւնները խելօքանալ և մինչև վերջ չլուսալ չեն կարող: Արքան որ անկման անգունդի առաջ, բայց ուս Քաղարձակապետութիւնը զեռ կարծում է որ ինքը կարող պիտի լինի մի այնպիսի հոսանք ստեղծել, որ իրեն միջոց տար նորից ջրի երեսը դուրս գալու և ազատ ափ հասնելու: Յարկվի ներկայ այդ հոգեբանութիւնը հրապարակ դրեց նրա ամենամեծ զօրավիզներից մէկը՝ Տրեպովը, որի խօսքերը ո՛չ թէ անհաստական, այլ հաւաքական, ափրող կողմի մատմուռնի արտայայտիչներ են:

Յարկվը, իր այս օրերի մէջ, Տրեպովի բերանովը խոստովանեց, որ յեղափոխական մակընթացութիւնը ավերից դուրս գալով՝ յարգահասան կերպով փուռում, տարածուում և սպանում է ամէն բան կրանել, ամէն ինչ իր անկն առնել: Բայց, յարում է Տրեպովը, զեռ ուշ չէ, զեռ կարելի է մակընթացութեան առաջն առնել, զրա համար հարկաւոր է միայն «ս ա հ ա ն ք ն եր (écluse) բանալ»:

Իսկ երբեմնի ներքին գործոց նախարարի օգնական Ուլուսովը մեզ հրապարակապէս ասել է թէ բուրոկրատական դողալեզուով (argot) ինչ կնշանակի «ս ա հ ա ն ք ն եր» բանալ: Ի դուր է Տրեպովը իր մաքերի շարունակութիւնը ծածկել փորձում, քօղը շատ թափանցիկ է . . .

Պատերազմական վիճակ, ուժեղացրած՝ զրուութիւն, թռուցիկ պատժող գնդեր, բանտարտոր, կախաղան միացած թնդանօթի հարուածների և հրացանի համազարկերի, ինչպէս և բացառիկ օրէնքների ու արտաքոյ կարգի լիպօրական իշխանութիւնների հետ—սրանք բոլորը այլևս դարձել են բուրոկրատիայի օրինական, սրբագործուած միջոցները:

Չեռքի տակից, բայց պաշտօնապէս հրկիզումներ առաջ բերել, մութ ուժերից «սե հարիւրակներ» կազմել, պօղրոմներ սարքել, ժողովուրդ ժողովօղի, ցեղ ցեղի դէմ յարուցանել—սա թէ ինչ ուղղութեամբ պիտի բացուէին «ս ա հ ա ն ք ն եր», որպէսզի մակընթացութիւնը աննշմարելի կերպով տեղատուութեան վերածուէր ու Յարկվը կանգուն մնար . . .

Եւ սահանքների այդ քաղաքականութիւնը կարմիր դժով անցնում է Ռուսաստանի մէկ ծայրից միւսը:

Ուրուսովի ձառնից և Տրեպովի ասածներից յետոյ՝ այժմ աւելի հասկանալի և պարզ է թէ ինչո՞ւ համար ս ա հ ա ն ք ն եր ի քաղաքականութիւնը գործադրուեց Պովկասում: Յարկվը ո՛չ միայն պաշտօնապէս հաստատեց թէ ինքն է եղել հայ—թրքական ընդհարումները ստեղծողը, առաջ բերողը, այլև նա բացատրեց թէ ինչո՞ւ և ինչ

նպատակներով էլ այդ արեւ է:

Աւրինն այժմս աւելի քան երբ և է զգոյշ պիտի լինել սահանքային քաղաքականութեանը կերակուր չլինելու:

Տրեսպոզիտան սահանքների միւս ուղղութիւնն էլ այն է որ վերջապէս հարկաւոր է բուրժուազիային ժպտալ, յայտնի զիջումներ անել, նրա հետ կոմպրոմիսները մէջ մանել, որպէսզի այդ փորձով կարելի լինի նրան դարձնել plus royaliste que le roi même (արքայից աւելի արքայական):

Իրաւ է բուրժուազիան այժմս շատ խնդիրների մէջ, նոյն իսկ արմատական բնաւորութիւն ունեցող, միատեղ է քայլում Վուժայի Օսայրագոյն Չախի հետ, իսկ նրա բուրժուազիան անմիջական շահերին բաւականութիւն տալով՝ հնարաւոր կլինի նրան կառավարելի տարր դարձնել, կառավարողի զգեստ հագցնելով: — մըտածել է Յարիզմի զօրավեզը:

Ար բուրժուազիան շուտով յղնել պիտէ և փորձերի ու կոմպրոմիսների մէջ էլ մանելու մասնաւոր ընդունակութիւն ունի — դիւս մասին պատմութիւնը կասկած չի թողել: Եւ հետեւաբար համառուսական Արոշտարիատը ո՛չ մի պարագայի տակ իր ինքնավար զիրքից և ուղղութիւնից չպիտի շեղուի:

Ռուսական յեղափոխութեան առաջին և մեծ ազդակը, իրական գործաւորը, սահվերան եղած է համառուսական պրոլետարիատը: Միւս տարրերը՝ շատ ու քիչ, երբեմն իսկ ահամայից, հասանքի մէջ ընկնելով՝ նրա յետեւից են դնացել: Ռուսական յեղափոխութիւնը պրոլետարիատի գործն է կռող, կոփող ոյժը նա է եղած:

Երգ, եթէ պատմական ներկայ րուպէների մէջ, բռնապետութիւնը տապալելու գործի առթիւ, Արոշտարիատը երբեմն իրեն թոյլ է տալիս բուրժուազիական տարրերի հետ կողք կողքի կանգնելու, նրան համագործակցելու, — գրանից զեռ չպիտի եզրակացնել որ նա պիտի թողնի իր ինքնավար զիրքը, դասակարգային կռուի հողը և անձնատուր լինի բուրժուազիական խնդիրային: — Երբեք: Բնդհանուր թշնամու դէմ ժամանակաւոր համագործակցութիւնը հակազիւ տարրերի կանուամն չպիտի բերի:

Բուրժուազիան էլ իր կողմից համազում է, որ առանց պրոլետարիատի ինքը ոչինչ չի կարող անել, ուստի եթէ այժմս ընկերանում, համագործակցում է նրան, — սպա դա իր դասակարգային շահերը բացարձակապէս տիրապետող լինելու տեսակէտից: Ա ղը երբ նա իշխանութեան գլուխն անցնի՝ անշուշտ նա էլ իր սեպհական սահանքն էր ի քաղաքականութիւնը պիտի ունենայ:

Եւ երբ այդպէս, սպա Կոուտի դէմ կռիւ

մղած ժամանակին չպիտի մոռանալ Վ լամպիրը:

Արոշտարիատը ներկայումս միշտ պիտի պահի իր ինքնուրոյն զիրքը, շարունակ կանգնի իր դասակարգային շահի խտրականութեան վրան և սոցիալիստական մարտը առաջ տանի երկու ճակատի վրայ կանգնած, այլապէս տուժող ինքը կը լինի:

Քանի որ երկու թշնամուն միատեղ և միաժամանակ զրոյնը հակաբնական և անհնարին պիտի լինէր, քանի որ վաղը բուրժուազիան է, որ իր ոսկի դահլը պիտի բարձրացնի, — նա այնտեղ պիտի բարձրանայ հէ ի հէ, և նրա վրայ պիտի նստի ուժաւորութեամբ, որքը նախապէս համրուածի գրութեան մէջ, իսկ այդ կը լինի այն ժամանակ, երբ պրոլետարիատը հիմակուանից, այս օրերի մէջ իսկ, երկու ճակատով իր կռիւը առաջ կը տանի և կուեննայ իր որոշ, ինքնատիպ, սեպհական ուղղութիւնը, բղխած իր դասակարգային շահերի դիտակցութիւնից, և բուրժուազիայի հետ բիւրոկրատիայի դէմ քայլած ժամանակին չի մոռանալ՝ որ թշնամու հետ է քայլում թշնամու դէմ:

Կ Ա Մ Լ Թ Ե Լ Կ Ա Մ Գ Ո Ր Թ Ե Լ

«Ի գուր է բոլորովին ի գուր ձեր աշխատանքը, ձեր նեղութիւնը և ձեր միջնորդութիւնը այս հայերի համար: Սրանք մի այնպիսի ազգ են, որ ո՛չ անցեալ են ունեցել, ո՛չ ներկայ ունեն և ո՛չ էլ ապագայ պիտի ունենան: Այո՛, բոլորովին անօգուտ, աւելորդ է դրանց համար աշխատելը . . .» — Մտաւորապէս այդ խօսքերով էր որ Ատանայի թուրք դէֆտերարը դիմեց Եւրոպական հիւպատոսներին, երբ ս անք պահանջում էին նրանից ապահովութեան միջոցներ ձեռք առնել գրգռուած խուժանի դէմ, որպէսզի Չէյթանից վերագործող շնչակեանները անվտանգ կերպով նաև կստեն՝ Եւրոպա փոխադրուելու համար, ինչպէս որ խատացուած էր Չէյթանցիներին և խաղաղութեան պայմաններից էլ մէկն էր եղած:

Ի՞նչն էր առիթ տուել դէֆտերարին այդպիսի մի վատ կարծիք կազմելու հայերի մասին. ինչու նա փրփրոտած՝ լորձուքը բերանում կրկնում, վերակրկնում, ընդլայնում էր իր խօսքերը և աշխատում դիմացը եղողներին համոզել, որ իր ասածները պատմական ճշմարտութիւններ էին, — իրականութիւն՝ որին պէտք էր հաւատուլ:

Անշուշտ նա գիտէր որ իր բնական վայրերից հազիւ մի քանի մղոն հեռու գոյութիւն ունէր Չէյթանը՝ հայ «Արժուի բոյն»ը. չէ՞ որ այնտեղ կային մարտիկներ, որոնք նորագոյն պատմութեան ընթացքում յաճախ իրենց բողոկների ոյժը ցոյց էին տուել ռամանեան զօրքերին, — կոտորել, կոտորուել էին, բայց ստիպել էին իրենց վրայ յարձակողներին յարգել տղամարդութիւնը և այդպիսով, թէև անհաւասար պայմանների մէջ, պաշտպանել էին իրենց

մարդկային իրաւունքները: Մի ուրիշ ժողովրդի մի բուն զաւակները յրանցից աւելին կարող էին անել:

Գուցէ նրա յիշողութեան մէջ գեռ բոլորովին թարմ էին Զէյթունի մղած Տերոսական վերջին կրօնները, նրա տարած յաղթութիւնները. նա անպատճառ լսած էր Զէյթունի զորանոցի գրաւումը, օսմանեան զրօշի խնարհաւիւրը և այդ զրօշին հաւատարմութեան երգում տուող զօրքերի շարան-շարան գլխիկոր անցնիլը յաղթող հայերի շարքերի միջից: Ի հարկէ դա կսկծեցուցիչ էր լսելու բռնապետութեան մի պաշտօնիայի համար բայց քանի որ այդ դէպքից տեղեկութիւն ունէր, ուրեմն ինչու համար այդպիսի մի անարգ կարծիք Զէյթուն արտագրող մի ժողովրդի մասին: Նա խանձը, ատելութիւնը, ցեղային ոգին էր նրան բորբոքում, թէ մի այլ թագուն պատճառ:

Արդեօք դէժտերգորը իր բառերը բերանից ժայթքած ժամանակին աչքի առաջ էր օնեցել զէյթունցի Տէր-Արապետի ընթացքը, — թէ ինչպէս նա Ղեւոնդ լինելու պատեհութիւնը ձեռքից բաց թողած իջել, կանգնել էր մի անարժան զիրքի վրայ: Այդ էր պատճառը, որ Համիդի ծառային ստիպում էր հային անարգել և նրա մէջ ո՛չ մի արժանաւորութիւն չտեսնել:

Շատ կարելի է, որ բորբոքուած պաշտօնեան իր վեկայաբանութիւնները արտասանելիս՝ աչքի առաջ էր օնեցել այն ոչ-համերաշխ, տղեղ ոգին, թէ ինչպէս Զէյթունը գարկուած ժամանակին, զուրկ լինելով անհրաժեշտ պաշարից և ուղղամթերքից, չէր կարողացաւ իր կուռին աւելի ընդարձակ ծաւալ տալ և պատերազմի թատերաբեմը և՛ս աւելի ընդլայնել: Չէ որ նա կարող, ընդունակ էր այդ անելու, եթէ նրան օգնութեան հասած լինէին: Ատանա, Մերսին, Հաճըն, Մարաշ Անթիպ, Հալէպ . . . — դեռ մի կողմ թողած հեռու տեղերը — հազարաւոր հայեր կոյիս, որոնք իրենց ինթական կարողութեամբը աւելի ոյժ ունէին կուռող մի բանակ պահելու, քան Սուլթանի դատարկ գանձարանը: Աւ միթէ դա չպիտի լինէր ազատ ապրել ուզող ժողովրդների ղեկավարող զգացմունքը: Եւ երբ այդպէս չվարուեցան, երևան չը բերին համերշխութեան մի ընդհանուր ոգի, շաշխատեցին տղամարդի պէս արձագանք տալ իրենց կղբայրների կողին, նրանց՝ որոնք արին էին թափում մի հանրական գործի համար, ու երբ ամէնքը մի դրօշի տակ չհամախմբուած՝ միատեղ չջանացին կամ կօտորուիլ մեռնել, չտեսնել թէ ինչպէս իրենց օջախը անարգում էր, կամ բոլորը միասին աղատութիւն գրկել: — այն ժամանակ այդ տեսակ վրձումը ունեցող ժողովրդին չէր կարելի արհամարել: — Հայց թուրք պաշտօնեան մտածմունքի այդ տարրերովն էր շրջապատուած:

Ով գիտէ, կարող է պատահել որ դէժտերգորը կարգացել էր ընդհանուր պատմութիւն, նրա սուած օրինակներից գիտէր թէ ինչպէս երբ նուաճուող, ազատութեան ձգտող մի ժողովուրդ հոգեբանական րոպէին արձակում է իր սրտահարձ ձիջը՝ նրա բոլոր մասերը լսում, հետևում են և գիտակցութեամբ մահ են ընտրում, քան նորից ստրկութեան կապանքներին անձնատուր լինում: Արդ, երբ այդ րոպէն ներկայացած էր ու զէյթունցու ձիջը արձագանք չգտաւ և շատ շատերը դարձնալ շարունակեցին օսմանեան

չղթաների մէջ տեսնել իրենց գերագոյն բարօրութիւնը ու յՍուլթանական գահի հովանու՝ քաղաքականութեանը կառչել և մէն մինակ թողեցին հայ ազատութեան մարտիկներին կուռի դաշտին մէջ — ուրեմն՝ իր մէջ այս տեսակ տարրեր ունեցող ժողովրդի մասին չէր կարելի կարծիք յայտնել թէ նա պագայ էլ չպիտի ունենայ: Այդպէս էր բացատրում իր դիրքը տաքացած պատմագէտ-փիլիսոփան:

Իսկապէս մենք չզիտենք թէ ինչ տարբերից էր բաղկացած դէժտերգորի հոգեբանութիւնը, բայց մարդը համոզուած էր որ յայս ազգը մարդ չի եղել, մարդ չէ, մարդ էլ դառնալիք չունի: — Նա անցեալում եղել էր հլու հպատակ, անարգուած, արհամարհուած վեճակ ունեցող, այդպէս էլ է այժմս, ուրեմն այդպէս էլ պիտի լինի և՛ ապագային, — չէ որ անցեալից կազմուած է ներկան, իսկ ներկայից՝ ապագան: Եւ որովհետեւ դա իրականութիւն էր, ասել է թէ հայի բնականոն դրութիւնն էլ այդպէս պիտի լինէր մինչև վերջ: Արդ այդ բոլորի մասին որոշ, դրական համոզում գոյացրած լինելով՝ թուրք պատմագէտ փիլիսոփան գալիս էր այն բացականչութեան թէ ինչու եւրոպացիներն էլ մինչև ցարդ չեն տեսած ու չեն տեսնում աչքառու այդ իրականութիւնը և տակաւին ցանկանում են միջամտել ու նրանց՝ համար մի բան անել: Արդեօք դա հակաբնական մի ուղի չէր, որին նրանք սխալմամբ հետևում էին: Եւ երբ այդպէս, ուրեմն հարկ չէր նրանց համոզել որ յետ կենան իրենց արած քայլերից, բնաւ չմիջամտեն հայերի համար, ու թող տան որ նրանց կոտորեն, վերջացնեն և թուրք ամբոխին էլ խոչնդոտ չլինեն՝ որ հնչակեաններին մորթոտեն՝ փոխանակ նաւը դնելու:

— «Այո՛, ատի՛ր ինձ, օրբեք կուզես, բայց ո՛չ թէ արհամարհիր» — սրանք Շահ-Նամէի քերթուղի անմահ խօսքերն են, խօսքեր՝ որ իր մէջ մարդկային արժանապատուութիւն բովանդակող ամէն երիտասարդի նշանաբանը պիտի լինէին:

Համիդի պաշտօնեան երբ կոտորում, թալանում, հրկիզում, բնաջրում էր, դա հասկանալի էր այդտեղ նրա աղիքները տրորում են, այդտեղ կայ մի շարժառիթ որ նրան ստիպում է գազանանալ, գալարուել, բայց երբ գալիս է արհամարհանքը . . . օ՛, դա անտանելի է, անտանելի:

Արդ մի թուրք պաշտօնեայ — և դա անհատական կարծիք չէ, այդպիսի մտածողներ տասնեակ հազարաւորներ են ո՛չ միայն թուրք բոլոր խաւերի, այլև նոյն խկ ուրիշ ազգերի մէջ, — ամբողջ հայ պատմութիւնը արհամարհանքի մի կոյտ է: Համարում, երբ հայ ժողովրդի վրայ արհամարհանքի մի խաչ է քաշում, դու՛ հայ երիտասարդ, ջիղ կուռնենա՛ս այդ արհամարհանքը տանելու, կլինես՝ այնքան վատ, որ կգաս արդարացնելու այդ Ծառայի խօսքը. կլո՛ւս, կհամակերպի՛ս, թէ՛ կլինիս տղամարդ, ասպարէզ կնետուես և կողողակես, — «Այո՛, ատի՛ր, մորթի՛ր, կոտորի՛ր բայց արհամարհել՝ երբէք»:

«Սուր քո և պարանոց մեր», երբեմն պատասխանեցին. բայց այդ քաջերը գիտէին՝ որ սուրը պարանոցին հասնելուց առաջ՝ նախ բազուկը պիտի կրարէր ու նրանք միաժամանակ բազուկ էին ցոյց տալիս: Գու՛ն էլ այդ կանն՝, կուռնեա՛ս այդ անհանունութիւնը, ժամանակակից երիտասարդ:

—Մենք եւրոպացիներ չենք, մենք ասիացիներ ենք. այլ է մեր սովորութիւնը, մեր օրէնքը, այլ՝ ձեր սովորութիւնը, ձեր օրէնքը: Մեր սովորութեամբ, արեւելքի օրէնքով, կնոջ և մարդի մէջ մի երրորդ անձ չի մտնիլ, դա դէմ է մեր զգացմունքներին, մեր օրէնքին: Հայերը որ կան, նրանք մեր՝ թուրքերիս կիսկներն են, մենք էլ նրանց էրկներն ենք, և երբ այսպէս, ուրեմն գուք, եւրոպացիներ, ինչո՞ւ էք մեր և նրանց մէջ մտնում:

Այս էր պատասխանի իմաստը (պարնոյ վաղի) ուղղուած պր. Գիլլօիին, երբ սա Սանտոյ անաջին (1894) կուրից յետոյ կարին գնացած՝ ցանկանում էր ամէն ինչ հետախուզել և մի տեսակ ընդհանուր համադրութիւնը ունենալ բոլոր կարծիքների, թէ ինչո՞ւ են հայերին խողտողում, բնաջնում:

Արեւելքում կինը թէև շնչաւոր, բայց իսկապէս մի անշունչ առարկայ է. նա թէև կայ, գոյութիւն ունի, բայց ո՛չ որպէս նպատակ, ո՛չ որպէս վախճան. նա չի շնչում՝ ինքն իրմով, ինքն իր համար, ո՛չ, նա այդպէս չէ, նա ապրում է որպէս մի ջոց մի ուրիշի՝ իր ամուսնու համար. նա տանը մէջ ունի իր օրինական տէրը, իր ազան, իր գըլ-խաւորը՝ որի օտուկն է ինքը և նրա հաճոյքներին բաւականութիւն տուող առարկան: Կինը եկած էր իր կեանքով ծառայելու էրկանը, եթէ նա այդ շրջանակից դուրս գար և իրեն համար գծագրուած նպատակից շեղուէր, ապա նա կանարգուէր, կվոճուէր, ամէն տեսակ շարժարանքի կենթարկուէր անպատիժ կերպով: Այր սեպհականատէրը պիտի վայելէր իր սեպհականատիրութեան իրաւունքը լիակատարապէս և քանի որ այդ իրաւունքը դարձել էր անձեռնմխելի, ուստի ամենօրեայ կարգ-կանոնը, օրէնքը տրամաբանում էր, որ կնոջ և մարդու մէջ մի երրորդը մտնելու իրաւունք չունէր. — հակառակ ուղղութեամբ փորձը կլինէր հակօրինական:

Փոյթ չէ որ Բարձր-Հայրի բարձրագագաթ լեռ. ներից մինչև անդնդախոր ձորերը կարող էին բողբոջել և իրաւամբ, այդպիսի մի կարծիքի դէմ. փոյթ չէ որ Ալաիի շնչած օդի ալիքները, կոխած գետնի վրայ գտնուող հողը, քարը . . . այդ հաստատութեան դէմ իրաւունք կունենային ազազակ բարձրացնելու, բայց ինչ արած, Ալաիի համար պատմական ոչինչ գոյութիւն չունէր. ներկան նրան այն հղակացութեանն էր հասցրել՝ որ հայերը կնիկ են, իսկ թուրքերը՝ էրկի: Ալաիի պատմական փիլիսոփայութիւնը մինչև այդտեղ էր հասած, — ուղիղ, սխալ, այդ չէ խնդիրը. նա կազմել էր իր համոզումը, և այդ համոզումը արտայայտում էր մի եւրոպացու, որ սար ու ձոր ընկած, «Սանտոյ Ծառերի», «ՄՏեր» ների աւանդութիւններովը և նրանց յաջորդների կենդանի օրինակներովը իր գլուխը լցրած՝ Եւրոպայի առաջ փաստում էր, որ հայ ժողովուրդը արժանի էր ապրելու, բայց ինքն իր համար:

— «Մտի ինձ, որքան որ կուզես, բայց մի արհամարհիր»:

Մտելութեան առարկան հէնց նրանով որ ասելութեան զգացմունք է յարացանում՝ զրանով նա ցոյց է տալիս որ կայ, որ ոյժ է, որ մի բան է վերջապէս: Արհամարհանքի առարկան որովհետև յուզ-

ման ո՛չ մի լար խաղի մէջ չի գնում, զրանով արդէն հաստատում է որ ինքը որքան որ կայ, բայց իրօք չկայ, որ նրա լինելը չլինելու հոմանիշ է և, ուրեմն, իրական կեանքի համար նա մեռած է:

Բայց մինակ Ասիան օրինակ չառնենք, Եւրոպան էլ այդպիսի գաղափարներ է ունեցել խառն ապրող ժողովուրդների փոխադարձ յարաբերութեան մասին: Երբ յայտնի պատմաբան Մոզզէնը Բոհեմիայի մէջ ապրող գերմանացիներին խրատում էր միշտ բուռնացրով խօսք հասկացնել պինդպիտ Չեխերին, այդ ժամանակները Սլաւոնների երկրներում նուաճողների իրաւունքով ապրող գերմանացիները վրդովուած սլաւոնական ռոնձգութիւններից, որ համարձակուում էին հաստատութեան իրաւունք պահանջել գերմանացիների հետ մի պատգամաւորութիւն ուղարկեցին Բիսմարկին: «Նրկաթի կանցլէր»ը գրկաբաց ընդունեց պատգամաւորութիւնը. սխուճեցաւ գանգատը, բողբոջը, — գերմանական բուրժուազական թէօրիան ուղղում էր բնագիտութեան մի մեծ սխալը, այն՝ որ ջրվէժի վարը կանգնող գառնուկը կարող է պատրել վերև կանգնած. գայլի ջուրը՝ Բիսմարկը «ոտնձգութեան» բոլոր պարագաները լսելուց յետոյ՝ պատգամաւորութեան անդամներին յորդորեց որ մի բան չմտնան այն՝ որ գերմանացիները էրկի են, իսկ սլաւոնները՝ կնիկ: Էրկիը ասելի մեծահոգի, աւելի լայնասիրտ պիտի լինի ու վեհանձն. Եօրէն յաճախ պիտի ների կնոջ թեթևութիւններին, քմահաճոյքից առաջացած նրա անմտութիւններին. արդ ուղարկի համար ինչո՞ւ կուտել, քանի որ մարմինը քանն է, — այս խրատները Բիսմարկը գինգ արեց և գերմանացի էրկիների ախարջներինցը կակնց: Ու գերմանական պատգամաւորութիւնը վերագործաւ այն համոզումով, թէ արդարև գերմանական ցեղը էրկի էր, իսկ սլաւոնականը՝ կնիկ: Իւ էրկիը կնոջ թեթևութիւններին պիտի տանէր բայց, ի հարկէ, ո՛չ անառակութիւններին . . .

Օսմանցի բիւրոկրատները շատ են սիրում բիւրոկրատական Եւրոպան ընդօրինակել. և ինչո՞ւ չհետևել Բիսմարկին ու նրա հովերը չառնել. երկու նուաճուող ժողովուրդների վեճակը նոյնը չէ՞ր, մէկի բուռնացի ծանրութիւնը պակաս էր մի սից:

Մարդիկ երբ մի անգամ անձնատուր են լինում սրտազեղումի, նրանք գուրս են թափում իրենց սրտի խորշերի մէջ ամբարուածի իսկականը, — դա նրանց զովութիւն է տալիս և ջիղջիղ կազդուրում:

Արնոյ Ալաիի ասածները մի համադրութիւն էր, որ կազմուած էր այնպիսի եզրերից, որոնք ունէին իրենց արմատը թուրք ժողովուրդի զանազան խաւերի մէջ:

Արհամարհանքի բեռը տանելը ծանր է, շատ ծանր, թէև այդ բեռը այնքան թեթև է, որ սողուններն են տանում, ու զրա համար է որ մարդկային արժանապատուութիւն ունեցողները աւելի լաւ են համարում բուռնացի բարձրացնելով մեռնել, քան համակերպելով արհամարհանքի կեանքը քաշկրտել:

Ազգասի և արտասահմանի հայ մտուրը զայլոյթի շեշտերով արձագանգ տուեց այն եղեռնագործութիւններին, որոնք կատարուեցան Արաւնդայի մէջ: Նրկարագրուեց այնպիսի զէպքեր, որոնք իրենց նրբութիւններով թրբական զօրքերի շահատուկութիւններն իսկ կարող էին գերազանցել: Ծեծել, կողպտել,

Տրկիզի, ումբակոն, խողխողե, հայհոյե, գլխի մա-  
ղերից, մորուքից բռնած գեանից քարչ տալ, և այդ  
բոլորը առանց որ և է շատ ու քիչ արդարացուցիչ  
պատճառի:—Պետական իսկական պատճառաբանութիւնն  
է, որ պէտք է հայերի աչքը վախցնել, նրանց  
թուլացնել, անկարողութեան մէջ դնել՝ բիւրոկրատական  
ապագայ հաշիւների տեսակէտից:

Հայ գիւղացին, հայ գեղջիուհին եւ թարկուեց  
ամենաբարբարոսական վարմունքների . . . Մենք ամէն  
բան կարող էինք տանել, ինչ ուզում էին թող  
անէին, բայց կանանց բռնաբարել մեր աչքերի ա-  
ռաջ՝ այդ մենք չենք կարող տանել, ողբալով ա-  
սել է մի հայ գիւղացի բռնաբարում է եօթը տա-  
րեկան մի անմեղ աղջիկ. մեր լէգալ մամուլը տուեց  
այդ «գառնուկի հրեշտակային անմեղութեան» նկա-  
րագրութիւնը: Վիճակն 80-ամեայ պառաւ կանայք և  
ծերունիներ իրենց զաւակների, հարսների, թոռների  
առաջ: Թաթարները խնայել էին մի համր ու կոյր  
աղջկայ՝ կողակները նրա պատիւն էլ էին ոտքի տակ առել:  
Իսկ կանանց, մանուկների խուճապը, ձիւնայից ան-  
տառների և ձորերի մէջ պահուելու շրջանը:—Գրանք արդէն  
դժուարութեամբ էին կարդացում:

Ընթերցողների, հայ հասարակութեան համար ծածուկ  
խորշ չմնաց: Վանդալական արշաւանքների շրջանակները  
իրենց բոլոր գունաւորութեամբ հրապարակ էին դրուած:

Բայց այդ բոլորը ինչո՞ւ համար, ինչ նպա-  
տակով, իրական մի հետեանք յառաջացա՞ւ, դա մի ա-  
ւելորդ արատապութիւն. չէ՞ր գլորուող շարունակա-  
կան իրականութեանը:

Եթէ լրացրական այդ ճիշդ մի թշուառական  
Երմույսի, մի սողուն Ֆրէյլիսի պատկերացնելու հա-  
մար էր, — դա չարժէր: Մարդկային ամօթը կորցրած  
այդպիսի մարդասիրտը գաղանները նոր դէմքեր չեն:  
Նրանք վաղուց ասպարէզի վրայ են:

Եթէ այդ բոլոր նկարագրութիւնները բիւրո-  
կրատական քաղաքականութեան անարդարութիւնները  
նրա թաղուէն զուտանակները վեր հանելու համար  
էին — դա ոչ միայն աւելորդ էր, այլ դրանով ցոյց  
տուած կլինէինք մեր քաղաքական տհասութիւնը:

Իսկ եթէ անմեղի, թոյլի հեծեծանքը դրոււմ  
էր հրապարակ, որպէսզի պարտաւանութեան, արժանապատուութեան, մարդկային  
ամենամեղ զգացումները խաղի մէջ մտնէին  
ու գործք յառաջանար, — ապա ինչո՞ւ, ինչո՞ւ չը  
յառաջացաւ. էլ ինչն էր պակաս որ պարտականութեան  
զինուորը տղամարդի պէս յառաջ չնետուէր և ճակատն  
ի վեր չպոսար . . . «Ատի՛ր, բայց ո՛չ արհամարհիր»  
և այդ հրէշներին տեղն ու տեղը իր ոտքերի տակը փը-  
ռելու հոգեկան գերագոյն զուարճութիւնը չունենար,  
իր ամենաբարձր պարտականութիւնը կատարողի գի-  
տակցութեամբ:

Որքան որ Երմույսներ, Ֆրէյլիսներ, et tutti  
quanti, մարմնացնողներ, ներկայացնողներ լինեն մի ամ-  
բողջ սիստեմի, գործիքների քաղաքական մի որոշեալ  
դրութեան, այնպէս անհայտաբան այդ անարգ վիճակաբ-  
նները չէին յանդգնել այդ աստիճան ժպիւրհ մի քալ  
անելու, եթէ առաջուց արհամարհանքի ժպիտը իրենց  
չթուներների վրայ դրոշմուած չը լինէր. եթէ նրանք  
նախապէս համոզուած չը լինէին թէ «այս աղբի»  
պատկանողներին ո՛չ միայն կարելի է հրկիզել, ուր-

բախտեալ, ամէն տեսակ ֆիզիքական տանջանքի են-  
թարկել, — որ նրանք կարող են տանել, — այլև նրանք  
համբերութիւն կունենան առանց մորթուելու տանե-  
լու՝ երբ ոտնակոխուեն նոյն իսկ նրանց ամենանուի-  
րական զգացումները, — երբ ծնողների առաջ բռնա-  
բարոյին զաւակները զաւակների առաջ՝ ծնողները:  
«Մենք ամէն բան կտանէինք, բայց ո՛չ մեր կանանց  
լիւտելու մեր աչքերի առաջ:» — Բայց Ֆրէյլիսը, Երմու-  
յսը, համոզուած էին, որ կարող էիք տանել, այդ  
է երկու հոգեբանութեան տարբերութիւնը: Երբ է  
որ «Արարնդայի հերոսները» մի փոքր կմտածէին,  
սարսուռի քրտինք կհոսեցնէին՝ իրենց վճիռները  
արձակելուց առաջ. — երբ նրանք առաջուց գիտակ-  
ցած կլինէին թէ «այս աղբին» պատկանողները առանց  
նախապէս մորթուելու՝ իրենց թոյլ չեն տալ իրենց կա-  
նանց և զաւակների բռնաբարուիլը տեսնելու. երբ  
նրանք որոշակի վատահոյութիւն ձեռք բերած կլինէին՝  
թէ «այս աղբի» միջև միշտ կգտնուին «Ծուռեր», որո՞ք  
անպատիժ չեն թողնել անմեղների զոհուիլը երբ նը-  
րանք վրէժխնդիր, պատժող ձեռքի ստուերը շարու-  
նակ իրենց վրայ մղած: անջի պէս ծանրացած կտեսնէին.  
երբ նրա՞ք ապահովաբար կգիտնային, որ հայ կնոջ  
ձիշտ, գողգոջուն ծերունու արտասուքը արձագանք կը  
գտնի և անպատճառ գուրս կգայ մէկը, որ իրենց  
առաջը կարձանանայ՝ արդար հատուց մասն  
գաղը ձեռքին:

Ֆրէյլիսներ, Երմույսներ, որպէս մարդկային  
արժանապատուութիւնից զրկուած բիւրոկրատական ա-  
րարածներ, նրանք իրենց կաշին խաղի մէջ չեն դնիլ  
ո՛չ բոժանով — Օրմանովների, ո՛չ էլ «հայրենիքի» հա-  
մար: Նրանց մղիչ գաղափարը իրենց սեպհական  
կաշին է. երբ այդ կաշին քերթուելու ուրուականը  
իրենց առաջ ունենան՝ նրանք կտուփ սկնան, ինչպէս  
սողուններ, ու յանդգնութիւն չեն ունենալ «աչքառու»  
գերի մէջ մտնելու, իրենց արտաքոյ կարգի «նուաղը»  
ցոյց տալու համար: Երբ մի արարքից գովասանք,  
մեծարանք, աստիճանի, ուժկի բարձրացում կայ, — ու-  
րեմն ինչո՞ւ չանել: Աւրիշ է՝ երբ մի արարքի յե-  
տե տեսնուի արդար հատուցման բազուկը այդ ժամանակ  
նրանք՝ այդ սողունները՝ կծկուիլը և իրենց պատեանի մէջը  
մնալը աւելի նախապատիւ կհամարեն, — միշտ իրենց կաշ-  
ուի տեսակէտից:

Գերմանացի կոցեբուն ծաղրում, հեգնում էր  
ամէն ինչ, նա չէր ենթադրում իսկ, որ «կոմսգա՞ծ»  
Գերմանիայի միջից մէկը կարող էր գուրս գալ և  
իրենից հաշիւ պահանջել, ու դրա համար էլ տալիս  
է իր տեղեկագրերը Աղէքսանդր I-ին, մէկը միւսից ա-  
ւելի հեգնող, մէկը միւսից աւելի եռանդագին:

Մուռին մէկը կարլ Սանդ գրեթէ մի պատանի,  
ամենայն հանդարտութեամբ մտաւ «բանաստեղծ-հրա-  
պարակաստի» սենեակը և իր ամենանուիրական պար-  
տականութիւնը կատարողի գիտակցութեամբ խողխողեց  
նրան՝ առանց երկիւղի, վրդովմունքի նշոյլ անգամ  
ցոյց տալու. հոգեկան զուարճութեամբ լի՝ նա իր ոտքերի  
տակը փռուած չարագործի գլխի վրան կանգնեց մինչև  
վերջ: Աղէքսանդրը շատ որոնեց, շատ խոստումներ շալկեց  
նոր կոցեբուններ գտնելու համար, բայց այդ նրան  
չյաջողուեց, որովհետև կոցեբուի գերը կատարողի հետ  
կապուած մնաց Սանդի արիւնքների դաշոյնի յիշատակը:  
Յեղափոխութեան ժամանակ անհատական քը-

մահած արարքների հեղինակներին, եղական պատասխանատուութիւններ ստանձնող չարագործներին առես առնել չէ կարելի: Սպասել, թող տալ որ ընկերութեան դէմ մեղանշող այդպիսի ոճրագործները պատժուեն ընդհանուրի մէջ, սպասել որ քաղաքական կարգերի փոփոխութեամբ ինքնահաճ յանցանք գործողները կզղեցնուին ու այդպիսով վերջ տրուի նրանց կամայականութիւններին, — գա թէ՛ շատ ուշ կլինի, թէ՛ ընդհանուր ամբարոյացում առաջ կբերի և թէ՛ նոյն իսկ հասարակ կլինի արդարագատութեան գաղափարին ու Յեղափոխական գործի շահերին:

Ըրէշները օրը օրին պիտի բնաջնջել: Զագոնական մի փիլիսոփայութիւն քաղաքացիական առարինութեան մասնաւոր տիտղոս էր ընծայում նրանց՝ որոնք մէջտեղից կվերցնէին անուղղայ և վտանգաւոր չարագործներին ու այդպիսով ընկերութիւնը անմիջապէս կազատէին ոչ — ցանկալի տարրերից:

Այդպիսի միասիւս ունեցող անձնաւորութիւնները Հայոց Պատմութեան մէջ անուանուել են վիշապաքաղներ:

Այսպէս, ուրեմն քաղաքական յարաբերութեանց մէջ արհամարհանքը տիրող գիծ է դառնում, երբ իրաւատէրը իր երաւունքը պաշտպանել չի կարողանում կամ ձգտում չի ցոյց տալիս այն պաշտպանելու ամէն գնով:

Երբ մի կառավարութիւն տարիների ընթացքում կողոպտում, աւերում, անբան մէջ է լողացնում մի ժողովուրդ և սա ամէն ինչ լուռ ու մուծ տանում է, երբ մի գասակարգ անվերջ կերպով շահագործում է մի ուրիշ գասակարգին, առանց որ վերջինս ըմբոստացումի ճանապարհը բռնէր, երբ մի անհատ զորաւորի իրաւունքի վրայ յենուելով՝ ստնակոխում է միւսին ու սա չի աշխատում պաշտպանուել իր կարողութեան սահմանների մէջ, երբ անիրաւութեան դէմ չի խօսում իրաւունքը, անարդարութեան դէմ՝ ճշմարտութիւնը, — այն ժամանակ բոլոր կարգի կեղծքները, շահագործողները, ուտող — գուփող դալները իրենց արհեստը կատարելուց յետոյ՝ իրենց իրաւունք են տալիս նաև արհամարհել ու իրենց զոհերին, — սա նրանց ընդհանուր հոգեբանութիւնն է:

Աւերող, քանդող, դիշատող կառավարութեան դէմ խօսում են գնդակով:

Շահագործող գասակարգի դէմ կարմիր դրօշ են բարձրացնում:

Չարագանց եռանդ ցոյց տուող Գրէլիներին, Երմոլայեաններին և նման ծառաների ճակատն են չափում անմիջապէս:

Յարգանքի գաղափարը ինքնապաշտպանութեան հետ է կապուած:

Գէֆտերդարը, Ալլին, — սրանք մեր այն սովորական գազաններիցն են, որ կոպիտ ուժից դուրս ուրիշ աշխարհ չեն կարող ճանաչել, և որովհետև այդ աղբակը ժամանակին երևան չի եկել ու իրենք շօշուփած, ահա՞ չեն, մանաւանդ իրենց կաշուի վրան, — ուստի արհամարհանքի պատմութեան մէկ մէկ փիլիսոփաներ են դարձել:

Իսկ այդ բոլորից յետոյ՝ փոխադարձ յարաբերութեանց երկու ուղին միշտ աչքից բաց չը պիտի թողնել:

Կամ լուել, համակերպիլ, թող տալ որ իրեն հետ վարուեն, ինչպէս որ ուզում են, իսկ սրա ծայրը

կայ Յարեղմ Սուլթանիզմ՝ իրենց բոլոր սարք ու կարգերով:

Կամ Խօսիլ, գործել, որի ծայրը կայ Յեղափոխութիւն:

Երկուսից մէկը պիտի ընտրել՝ գիտակցաբար: Իսկ նրանք՝ որոնք չեն ուզում լուել, ուզում են գործել, պէտք է պատրաստ լինեն ամէն տեսակ զոհաբերութեան — եթէ չեն ուզում կէս ճանապարհին մնալ և սմէն տեսակ արհամարհանքի առարկայ լինել: — Այո՛, կամ լուել կամ գործել:

Ս. ՍԱԳԱՀ—ԳԻՒԼԵԱՆ

**Թ Ղ Թ Ա Վ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր**

**Ն Ո Մ Ա Վ Ա Ն Ի Ց**

Վերջապէս թուրք տարրն ալ կարծինայ, կը խլտի, կը բողբէ: Առաջ մեզ համար շատ դժուար էր երևակայել, որ Ասիի թուրքը այրթնար, համարձակ բողբէր:

Ղիշտ է, սուաջները բողբներ եղած են, բայց անհատական տրտուջներ, դանգառներ էին ստոնք, որոնք հասարակական անտեսական խօսին հասկացողութեանց ու համոզումներու վրայ հիմնուած չըլլալով՝ անհատական բնաւորութեան անգին չէին անցնիր, ու կը մոռցուէին մէկուն կողմէն, ուրիշէ մը արտայայտուելու համար:

Բայց այս անգամ ուրիշ նշաններ կը տեսնենք, նոր ու յուսատու նշաններ: Մայիս 19-ին (հ. տ.) ուրբաթ առաւօտ, շատ կանուխ ոստիկանները իրար անցած դէս ու դէն կը վազվզէին՝ հրապարակներու ճամբաներու, շուկայի և կառավարական շէնքերու պատերէն ու դռներէն պատռելու համար թուրքերէն այն յայտարարութիւնները՝ որոնք այդ գիշեր փակցուած էին դանաղան տեղեր՝ թուրք դժգոհ տարրի կողմէն: Յայտարարութիւնը ուղղուած էր կառավարութեան հասցէին և կը կրէր հետեւեալ բովանդակութիւնը:

«Մենք, իսլամներս, մինչև հիմա յանցաւոր կը համարէինք հայ յեղափոխականները՝ ճանչնալով՝ դանոնք իրեն խռովարարներ: Բայց մենք մինչև այժմ կուրօրէն հնթարկուած լինելով կառավարութեան հարստահարութեանց ու ճնշումներուն, կը կարծէինք թէ արդէն այս է մեր ճակատագիրը՝ որուն մինչև վերջ պարտաւոր ենք հնազանդիլ: Իսկ այժմ բացուած են մեր մտքերն ու աչքերն՝ և մենք ալ հնթարկուելով հայերու վիճակին ու բախտին, կը ճայտակցինք անոնց բողբներուն ու կաղրարարները որ վերցնէք այս խիստ ճնշումները ու հարստահարութիւնները՝ որոնք այլևս անտանելի են մեզ համար: Անուղղակի տուրքերը, դատարանական զեղծումները, կաշառակերութիւններն, ու ամբողջ պաշտօնական խայտառակութիւնները մեր ժողովուրդը ծայր աստիճան թշուառութեան ու յետադիմութեան մասնեցին՝ որոնց այլևս չենք կարող դիմանալ:

«Այո՛ կամ ոչ՝ պատասխան»  
Մենք, սրտի անհուն ուրախութեամբ ողջունելով

Թուրք ժողովրդի այս քայլը, կը մաղթենք որ Թուրք զժգոհ տարրը խօսքէն գործի անցնի, որ տտեն մենք հայ յեղափոխականներս, մեր ձեռքը պիտի տանք անոնց՝ տապալելու կառավարական այս նեխած, տպուկանուած կազմը:

Անցեալ շաբթու տեղոյս Վալիի տղան՝ Ճեփքէթ Պէյը՝ քանի մը քաղաքային զինուորական պաշտօնեա. ներու հետ՝ Բաշկալէ գնաց, այն տեղէն ջուլամերկի վրայով Լայիջան երթալու և քննելու պարսկական նոր գրաւած այդ հողը՝ ինչպէս նաև Թուրք-պարսկական սահմանագրութիւնը: Կառավարութեան որոշման համաձայն նոր զօրքեր են ղրկուած Թուրք-պարսկական սահմաններու վրայ՝ Բայազիտէն ջուլամերկ ամրացը. նկու համար սահմանապահականութեան գծերը: Մէկ քանի կէտերու վրայ ալ նոր պահականոցներ պիտի չինուին:

Խօհապէս այս զգուշութիւնները պարսկաստանի վախճան համար են, թէ՛ ուրիշ նպատակ ունին՝ մենք վերջին կարծիքէն ենք:

Աղբատութիւն, թշուառութիւն, հացի թանկութիւն, տուրքերու խիստ հաւարում, — ահա՛ մեր վիճակը: ՆԺՂԻԶ

ՅՈՒՆԻՍ 14 (հ. տ.), 1906  
ՎԱՆ

**ՆԱՄԱԿ ՏՐԱՊԻԶՈՆԻՑ**

Չեմ գիտեր թէ ինչ կրնամ գրել, որովհետև գրիչս առաջ չերթար, ու միայն պարտականութիւնս է որ զիս կը դրդէ բան մը գրել:

22 ամիսէ ի վեր է որ տեղոյս բանտին մէջ քանի մը անմեղ երիտասարդներ կը հալին ու կը մաշին: Հաւարած տեղեկութեանցս նայելով՝ անոնցմէ մեծամասնութիւնը հազար ու մէկ նեղութեան է են. թարկուեր, ամէն մէկը երկու երեք անգամ մեռնելու շափ հիւանդացիներ է: Տրդատ Խորայէլեանը բանտային չարչարանքները տանել չկրնալով՝ հիւանդանոց էին փոխադրեր բանտին պաշտօնեան զինքը Թուրքերու սպաններ է, այդպիսով խամբեցաւ անմեղ կեանք մն ալ:

Այստեղ բանտին մէջ հիւանդութիւնները անպակաս են, իսկ պաշտօնեաների ի գործ զրած բռնութիւնները անլուր, խեղճ բանտարկեալները օրն ի օրն կը ծեծեն, կը չարչարեն՝ սովմահ զրոութեան մէջ պահելով զիրենք:

Անմասնալի երիտասարդ Համբարձում Խոջեանը ամէն տեսակ նեղութեանց տոկացեր է բանտին մէջ. այնքան առոյգ ու կայտառ է եղած, որ ամէն տանջանքներ տանելով՝ նոյն իսկ օր մը գլուխը բարձին չէ դրած: Ան դեռ կրնար շատ տարիներ ապրիլ ու ամէն տեսակ չարչարանքներու տոկալ՝ եթէ ուրիշ կերպ անօրինուած չըլար:

Տեղոյս արիւնդուշտ ընդհանուր դատախազը մասնաւոր ատելութիւն կը տածէր դէպի Համբարձումը՝ անոր վառվառնութիւնը, կորովը և յանգուզն ու համարձակ պատասխանները անմարսելի էին դարձած դատախազին և ահա այս գազանը կը միտի անոր կեանքի թելը կտրել:

Գոհ չըլալով Համբարձումի կախաղանի վճիռ

տրուելէն՝ ամէն կերպ կաշխատի կախաղանի վճիռը գործադրել տալ:

Համբարձումն երեկոյեան՝ երբ Համբարձումը հազու կերակուրի նստած և 4-5 պատառ կերած բանտին միւֆէտտիչը (քննիչ) «Համբարձում կէլ» ըսելով՝ գօլուշէն (բանտասենակ) դուրս կը կանչէ, վրան կը խուզարկէ և «փօլիս» (չարչարանատեղի) կը տանի: Ահա գիշերին բանտի դրսի դուռը կը բացուի, երեք հօգի կերթան «փօլիս», դուրս կը հանեն Համբարձումը և զինքը կառք գնելով՝ շրջապատուած հեծեալ ոստիկաններով՝ կը տանին:

Իրիկուտէն Տէր-Շիղայ քահանան վար գրուած կըլլայ կառավարութեան կողմէ՝ Համբարձումը խոստովանցելու համար:

Աը պատմուի հետեւեալ սրտաշարժ անցքը. — երբ Համբարձումը «փօլիս» կը տանին, տղան նախ կարծեր է թէ թղթերը Պօլիսէն աւրուած՝ ետ են եկած ու զինքը նորէն պիտի հարցաքննեն, բայց երբ ոստիկանները կուգան զինքը առնելու, կըսէ՝ «զիս պիտի մեռցնէք»: — «ոչ», կը պատասխանեն, «քեզ վան պիտի քշենք»: «Յետոյ Համբարձումը կառք կը դնեն՝ հետն ալ երկու զապթիաներ, ետքի կառքն ալ քահանան, ալայ գոմանտանը և շատ մը սրվարիներ: Կիսաբաժին մը գօրք կընկերանան, կառքին մինչև կախաղանին վայրը: Լուսադէմին էր: Տրապիզոնի բոլոր փողոցները ոստիկաններով կտրած էին, Մէլաանի հըրապարտիկին մէջ երեք սիւն իրար միացնելով՝ միացման տեղին չուանը կախուած ու տակն ալ սեղան մը դրած էին: Օտար պետութեանց ներկայացուցիչներ չը կային:

«Վերջին խնդիրդ ըրէ, Համբարձում» — ըսին:

«Աը խնդրեմ՝ զիս հրացանի բռնեցէք», կըլլաւ Համբարձումի անաջարկը, իր խնդիրը չեն յարգեր: «Ընկերներս բաժնին մէջ շատ կը նեղեն, թող չի նեղեն, կը խնդրեմ» և ամէնէն վերջը բարձր ձայնով պոսաց՝ «Եաշսըն Իրմէնի Գօմիթէսի, եաշսըն, պին եաշսըն», և չվանը ինքը իր ձեռքով իր վիզը անցունելով՝ կախուեցաւ:

Ախտուելէն յետոյ դէմքը բնաւ փոխուած չէր, միայն քիչ մը սպիտակեր էր, աչքերը քիչ բաց շրջութուքները գոց, այնպէս որ բոլոր ներկաները հիացան «Քաջաբար մեռաւ» — ըսին:

Յարգանք իր յիշատակին:

Համբարձումն օրը ճիշտ 24 տարեկան եղած էր:

ԱՆՅՈՐԴ  
ՄԱՅԻՍ 30 (հ. տ.), 1906  
ՏՐԱՊԻԶՈՆ

**ՆԱՄԱԿ ԹԻՖԼԻՉԻՑ**

Ո՛չ մի ժամանակ կառավարական պրօֆօկացիան այնպէս որոշ և ցայտուն կերպով աչքի չէր ընկել ինչպէս հիմա: Թաթար ամբոխի տղիտութիւնը, նրա յետապնդութիւնը շահագործուած է ակնյայտի կերպով, և այժմ ամէն բան աւելի պարզ է, քան առաջ: Ինքնակալութիւնը իր գիրքը վտանգուած յատնելով՝ նա իրեն թող պիտի տար ամէն տեսակ անսուրբ միջոցների դիմելու, որպէսզի կարողանար իր

տիրապետութիւնը պահելու ո՞վ էր նրան սպառնացողը—Տայ ժողովուրդը ընդհանրապէս, սրա պրոլետարիատ մասը՝ մասնաւորապէս։ Եւ զրա հակառակ ո՞վ էր որ իրերի արդէն եղած գրութեանը պաշտպան պիտի հանդիսանար—Թաթար արտօնեալ գասակարգը, որի փէշերի տակ կճկուած սպրոււմ էր նրա շահագործուող մասը՝ թէ գիւղացի և թէ ճարտարագործական բանուոր։ Թաթար արտօնեալ գասակարգի մտաւոր, հոգեկան և նիւթական բոլոր պահանջները արդէն կատարոււմ էին բիւրոկրատական տուած պայմանների շրջանակի մէջ, ուրիշ կեանքի՝ ուրիշ աւելի բարձր կարիքների մասին նա գաղափար չունէր, — խանը, բէկը, աղան ունէին այն ինչ որ արդէն իրենց պէտք էր, ուստի ինքնակալութիւնից աւելի գոհ թան դժգոհ լինելու պատճառ ունէին, իսկ Թաթար գիւղացին, բանուորը դեռ իր սեպհական շահերի որոշ գիտակցութիւնը չունենալով՝ կապուած էր մնացել իր ցեղակից տէրերի հետ՝ զատմական ամէն տեսակ գործօններ ծանրացել են թուրք պրոլետարիատի վրան և նրան կաշկանդում են մի շրջանակի մէջ, որ իսկապէս իրեն համար խորթ պիտի լինէր, եթէ նա զրա գիտակցութիւնը ունեցած լինէր։

Տայ և Թուրք ժողովուրդի միջև հակամարտութիւնը կար. նրանք այսօր չէ որ իրարու մօտ են ապրում, դարեր շարունակ նրանք մէկգմէկու հետ շփուել են և պատմական շատ աղբակներ կան, որ նրանց սրտի և յիշողութեան վրայ ծանրացել են։ Քացի գրանից՝ հայը յառաջագէտ ժողովուրդ լինելով նա նոր կեանքի կարիք ունէր՝ դա իր համար անհրաժեշտութիւն էր։— Զարգացած, յառաջ էր եկած հայ բուրժուազիան, որ պատմական Թասերաբն էր գուրս գալիս իր բոլոր պահանջներով։ Հայ պրոլետարիատը նոյն էր, ինչոր ամէն տեղինը՝ նրա ցանկութիւնները, նրա պահանջները այլևս չէին կարող շրջանակուած մնալ հին կեանքի մէջ։ Արեւմտ հինի և նորի կռիւը անպատճառ պիտի յառաջանար թէև խուլ կերպով։ Փոքրածիւ Թաթար երիտասարդութիւնը՝ արտօնեալ գասակարգի այդ իդէոլոգները, յառաջխաղաց մի կեանք կանգնեցնելու դիտումով՝ իրենց օրօրում էին շատ հեռաւոր միտածներով—վերահաստատել իսլամական տիրապետութիւնը և նրան կապել ընդհանուր իսլամութեան հետ, դա էլ որոշ չափով հաշուի մէջ էր մտել։

Նստաբար հայ ու Թուրք ժողովուրդների մէջ հակամարտութեան տարրերը դիպուած մնացած, խուլ կերպով գոյութիւն ունէին։ Թէ ինչ պայմաններ եթէ ստեղծուած լինէին, այդ ընդհարումը տեղի ունեցած չէր լինել, — խնդիրը այժմս զրա մասին չէ, խնդիրն է՝ որ ընդհարման ընձիւղները կային, նրանք զարգանում էին, իսկ թէ ապագայում ինչ պէտք էր անել չվերակրկնուելու համար՝ դա էլ բոլորովին տարբեր խնդիր էր։

Այժմս հարցն այն է, որ հայ—Թաթարական ընդհարումները կարող էին յառաջ գալ, եթէ կառավարութիւնը մատ չխառնէր, — մեր պատասխանն է որ՝ ոչ, իրաւ է հայ և Թուրք ժողովուրդի մէջ արեւտեսական, պատմական այլ և այլ հակամարտութիւններ կան, բայց իրենք իրենց թողած՝ այդ երկու հարեան ազգերը իրարու հետ չէին զարկուել, եթէ կառավարու-

թիւնը չլինէր։ Բիւրոկրատիայի հոգը չէր թէ այդ երկու տարրերի միջև եղած հակամարտութեան պատճառները ուրտեղից էին յառաջանում, նրա համար այդ հարցը գոյութիւն չունէր՝ որովհետև նրա լուծման մասին ինքը աշխատելու որ և է հեռաւոր միտում։ չունէր. նա միայն տեսնում, շոշափում էր եղած հակամարտութիւնը ու իր ճօճան քաղաքականութիւնն (politique de bascule) էլ նրա վրայ յենեց։ Հայով Թաթարին զսպել, Թաթարով հային, բայց աւելի Թաթարներին՝ քան հայերին ժպտալ, որովհետև իրեն գոյութեան սպառնացող անմիջական վտանգը աւելի սրանից էր գալիս քան միւսից, միւսին որպէս յետամնաց տարր՝ միշտ կարելի էր կարգի բերել։

Եւ համաձայն այդ ճօճան քաղաքականութեան բիւրոկրատիան ոչ մի միջոց ձեռքից չի փախցնում երկու ժողովուրդների յարաբերութիւնները որքան կարելի է շատ լարել, նրանց մէջ փոխադարձ կասկած և անվստահութիւն ներշնչել և միշտ վառ պահել և ի հարկէ կոտորածների, ընդհարումների գուռ բանալ։ Ներքին գործոց նախարար Աբուսուլի այն յայտարարութիւնը դուժայում թէ պոգրոմները սարքուում, պատրաստուում են վարչական պատասխանատու անձանց ձեռքով և պատասխանատու բիւրօներում, դա իր բոլոր գլխաւոր գծերովը մեր կաշուի վրայ փորձած տեսած ենք։ Բիւրոկրատիայի ձեռքը հայ և Թաթարական ընդհարումների մէջ այնքան ակնյայտնի մի իրողութիւն է, որ նրա մասին խօսելն անգամ աւելորդ է։

Տայ տարրը ի հարկէ այդ բոլորը շատ լուրջ հասկանում է, ուստի զգոյշ է մի այդպիսի վրան բաց թակարգի մէջ ընկնելուց, բայց Թուրք տարրը, դժբախտաբար, շարունակ իրեն Թայլ է տալիս կոպտաբար շահագործուելու կառավարական դիտումներից։ Ինչ սանել կուզի, որ Թաթարների մէջն էլ քիչ-քիչ սկսուել է զարթունալի նշաններ երևել, նրանց մէջն էլ աչքները բացողներ կան, բայց դա դեռ շատ սակաւ է, որպէսզի հնարաւորութիւն լինի կառավարութեան բոլոր դուրերը անգամայուծնել և ի դերև հանել։ Ազգամի, երևանի նորանոր դէպքերը մի անգամ էլ եկան հաստատելու մեր վերև դրած կարծիքը, — Թաթարը դեռ շարունակում է կոյր գործիք մնալ բիւրոկրատիայի ձեռքին և ազգայնականների տակ մեզ ինչ պէտք է անել, եթէ ոչ, պատրաստ գտնուել սպառնացող վտանգին դիմագրաւելու՝ որ կողմից էլ որ լինի, մի կողմից խաղաղ պրօպագանդա Թաթար ամբողին հասկացնելու իրեն համար լարուած թակարգը և իր իսկական շահը, միւս կողմից էլ զէնքը ձեռքին պահակի նման կանգնել՝ միշտ զգոյշ լինելով պրօպագանդիայի ձգած ցանցերից։

Ինչպէս ամբողջ Առևսաստանը, Արվիկան էլ արեւկոծեալ վիճակից դուրս կգայ, երբ նախ բիւրոկրատիան միանգամ ընդմիշտ ասպարէզից կհեռանայ և ինքնակալութիւնը իր բոլոր սարք ու կարգովը կը փշրուի և ժողովրդական միահեծանութիւնը յաղթող կը հանդիսանայ։

Այդ նպատակով էլ մեր կարգերը ամրապնդած գործում ենք։

Բ. Գ. Ա. Կ. Ի. Ծ

10 ՅՈՒՆԻՍ (հ. տ.), 1906  
Թ. Ի. Ֆ. Ի. Ծ

**ՆԱՍԱԿ ԵԱԼԹԱՅԻՑ**

Այլ էր միանգամայն հասարակութեան և միջև իսկ յեղափոխական կազմակերպութիւնների տրամադրութիւնը, յարաբերութիւնը դէպի Պետական Գուման՝ դեռ ևս վերջինը չը գումարուած, այլ է նա այսօր Այն օրուանից՝ երբ Պետական Գումայի նախագահ Մուրադեան մերժուեց անմիջապէս, առանց որ և է միջնորդի—պալատական միտիտի—ներկայացրնել Գումայի պատասխան—նախագիծը Ցարին՝ ի պատասխան վերջինիս թղթի վրայ թողնուած մի քանի անմիտ ֆրազներով, կրկու՞մ ենք՝ այդ օրուանից բացասական ելերարկանութեան մի ցնցող ուժգին հոսանք սկիզբն առնելով Պետերբուրգից՝ կայ ծակի արագութեամբ անցաւ լայնածաւալ Ռուսաստանի բոլոր անկիւնները և բացասականաբար ելերարկանացրեց այն ամեն կազմակերպութիւնները, հասարակական խաւերը, որոնք շատ թէ փոքր չափով լուստես յոյսեր էին տածում դէպի այդ նոր ստեղծ հիմնարկութիւնը։ Ինքնակոչ միտիտրական կազմի գլուխը պատասխան մերժուած ներկայագրած նախագիծի ամենահիմնական կետերին, արդէն որոշ կերպով գրծեց հասարակական խորհրդածութիւնների հոսանքը։

Այդ սկսուած հոսանքը իր ընթացքի մէջ աւելի ինքնատիպ ուղղութիւն ընդունեց այն ժամանակ, երբ Գումայի սօցիալ-դեմոկրատ պատգամաւորների խումբը մի կողմէ, դէպի համայն Ռուսաստանի գործաւոր մասսաները, հրաւիրում էր կազմակերպուել, միանալ, ուժեր հաւաքել, միտինգներ կազմել, կարծիքներ, պահանջներ արտայայտել և խնդրադրերի, նամակների կամ հեռագրերի միջոցով իրանց սեղեկացնելով աջակցութիւն ցոյց տալ միապետական կառավարութեան դէմ իրենց սկսած կռուին, մինչև որ ստիպեն նրան Սահմանադիր ժողով կանչելու։

Եւրոպայի ց Գումայի ընկեր-պատգամաւորների կողմէն պատասխանելու համար, մայիսի 21-ին՝ կայացաւ Ռ. Ս. Գ. Բ. կուսակցութեան և սօցիալիստ-յեղափոխականների միացեալ հրապարակային ժողովը, որտեղ երկրորտե ճառախօսութիւններից յետոյ՝ ժողովը դուրս բերեց ներքեի որոշումը, որն և միևնոյն օրը հեռագրով ուղարկուեց Պետական Գումայի աշխատաւոր խմբի անդամին։

— Եւրոպայի բանուորների ժողովը, որ կայացաւ մայիս 21-ին, 1906, որոշեց դիմել պետական Գումայի Աշխատաւոր խմբին հետեւեալ պահանջով.— մենք պահանջում ենք, որպէսզի դուք յեղափոխական գործողութիւններով ձգտէք անյապաղ Սահմանադիր ժողով հրաւիրելու։ Միայն այն դէպքում, երբ Գուման կապշտպանէ աշխատաւոր գիւղացիութեան, պարոլետարիատի և աշխատաւոր ինտելիգենցիայի շահերը, դուք կարող էք յոյս դնել ժողովրդային լայն մասսաների աջակցութեան վրայ՝ Հողի և աղատութեան համար մղուած կռուում։

Մայիս 21-ին այդպիսի մի ժողով տեղի ունեցաւ նաև Ալուպկայում (Եւրոպայ քաղաքին մերձակայ բուժարան)։ Ճառեր արտասանեցին սօցիալիստ-յեղափոխականները, իսկ նրանց առարկեցին սօցիալ-դեմոկրատները։ Մասսայական ժողովը վերջացաւ մի սօցիալիստ-յեղափոխականի ճառով, որի առաջարկած բա-

նաձեւը ընդունուեցաւ երկարատե ծափահարութիւնների տարաբի տակ և հ'ա այդ բանաձեւը։—

— Ալուպկայի սօցիալիստ-յեղափոխականների, 1906 թ. մայիսի 21-ին, կայացած մասսայական ժողովը, թուով ձուտաւորապէս 100 հոգի, միաձայն որոշեցին դիմել Պետական Գումայի մէջ եղած Աշխատաւոր խմբին հետեւեալ պահանջով.— մենք պահանջում ենք ձեզանից վճարական կերպով խզել ամէն մի կապ կառավարութեան հետ. մենք պահանջում ենք որպէսզի դուք յեղափոխական գործողութիւններով ձգտէք Սահմանադիր ժողովի անյապաղ կանչուելուն։ Այս բանաձեւը հետեւեալ օրը նայեպէս առաջարկուեցաւ. մայիսի 22-ին, ծովի վրայ գումարուած ժողովին, որը առանց որ և է առարկութեան տուեց իր միաձայն համաձայնութիւնը։

Մայիսի 25-ին, երեկոյեան ժամը 9-ին, քաղաքից մի քանի վերստ հեռու, ծովի ափին, Ռ. Ս. Գ. կուսակցութեան ղեկավարութեամբ կայացաւ բացօթեայ մի ժողով՝ 400 հոգուց բաղկացած։ Ժողովի խնդիրներն էին՝ հողային հարցը և սօցիալ-դեմոկրատիայի յորաբերութիւնը դէպի Պետական Գուման։

Առաջին ճառախօսը մի ակնարկ ձգելով 60-ական թուականների գիւղացիութեան անտեսական դրութեան վրայ՝ բերեց հասցրեց մինչև նրա ներկայ ամենաթշուառ կացութիւնը։ Ապա քննադատեց սօցիալիստ-յեղափոխականների հողային ծրագիրը և զարգացրեց մասնաւորապէս, իր ձառի մէջ, սօցիալ-դեմոկրատիայի հողային հարցը։ Միւս ճառախօսը նիւթ առնելով իրերի ներկայ դրութիւնը Ռուսաստանում, ցոյց տուեց յեղափոխութեան անցեալ հինգ տարուայ ընթացքում արած յառաջդիմութիւնը։ Այստեղ, զանազան կողմերում կանգնեցրած պահանջները լուր բերեցին թէ ոստիկանութիւնը հետքը գտել է և մօտենում է։

Ունկնդիր բազմութիւնը խնդրելով ճառախօսին շարունակել իր ճառը՝ յայտնեց որ ինքը ոչ մի պարագայում չպէտք է ցրուի, մինչև որ նա չը վերջացրն իր ճառը։ Ճառախօսը փոքր չափով կանգ առնելով սահմանադիր-առավարականների կուսակցութեան տարաբի վրայ, խորհուրդ տուեց չը մօտենալ այդ կուսակցութեան և չընթանալ նրանց տարաբիայով, այլ ամէն կերպ աջակցութիւն ցոյց տալ Պետական Գումայի մէջ գտնուող ընկեր սօցիալ-դեմոկրատներին, որպէսզի նրանք շարունակեն կսիւր այնտեղ՝ այնքան և այն աստիճանի, մինչև որ ստիպեն խուլիքան կառավարութեան անյապաղ Սահմանադիր ժողով հրաւիրելու։

Արբ նախագահը ժողովը փակուած համարեց՝ բազմութիւնը յեղափոխական երգերի ներդաշնակ քալուածքով շարժուեց դէպի քաղաք։ Արդէն գիշերուայ ժամը 11 և կէսն էր։ Լուսնկայ հանդիսա, զով գիշեր։ Քաղաք հասնելով բազմութիւնը, իմբերի բաժանուելով՝ ցրուեց զանազան կողմեր։ Խմբերից մէկը երբ արդէն հասել էր քաղաքային այգու վերջին ծայրին, այն ժամանակ միայն «Նաբերեթեայնայ փողոցի» միւս ծայրից խրոխտօրէն արշաւելով անցաւ մի հեծելախումբ։

Մասսայական ժողովներին էլ թիւ ու սահման չկայ մեզանում։ Եւրոպայի երկր կողմից շրջապատող լեռնային կանաչադարձ, անտառապատ բարձրութիւնները՝ ձորերը, դար ու փոսերը և պատմական Պոնտօսը, բն-

լորը, բոլորը առանց խտրութեան, հաւասարօրէն իրենց գրկերը բաց են անում և ապաստան տալիս զիշերային խաղաղ, հանգիստ ժամերին իրենց դիմող և իրենց ցաւ-հոգսերին դարմաններ օրոնող տանջուած մարդկութեան ամբոխին,— դորձաւոր դասակարգին, պրօլետարիատին:

Ա. ՋԻՒԱՆՇԻՐԵԱՆ

31 ՄԱՅԻՍ (հ. տ.), 1906

ԵԱՌԹԱՅ

### ՆԱՄՅԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

Վերջերս կառավարութեան բռնած դիրքը թէ զէպի Պետական դուժան և թէ ընդհանրապէս զէպի ժողովրդի պահանջները աւելի քան յանգուզի է դարձել: Մինչ մի կողմից Տաւրիկեան պալատում հաւաքուած ժողովրդային ներկայացուցիչները, միաձայն բողոքելով արդի բռնակալական օկեթիմի դէմ՝ պահանջում են անձի անձեռնմխելութիւն, խօսքի, մասնաւոր, խղճի, գումարումների, ընկերակցութիւնների և դորձադուլի ազատութիւն, միւս կողմից պալատական կամարիլան հաւատարիմ իր առաջադրած ծրագրին, շարունակում է ամենամեղուս պահպանել իր կամայականութիւնները, արեան և ծխի մէջ խեղդելով լայնատարած Ռոսաստանի բազմաչարչար ազգաբնակչութեանը: Ճիշդ այն ժամանակ, երբ ռուսական «պարլամենտը» և ամբողջ երկիրը ինքնակալ բիւրոկրատիայից ամենստիւ է պահանջում քաղաքական յանցանորների համար, կառավարութիւնը ի պատասխան դրան կրկնապատկուած եռանդով շարունակում է նորանոր զհարկել լցնել յարէ տոպրակները: Իսկ Բոլիշևիկի և այլ պատգամաւորների կրակոտ ճառերին և պահանջներին— դադարեցնել արիւնահեղութիւնը երկրում, բռնակալութիւնը պատասխանում է նորանոր ջարդերով, գումակում, վարձագրում, Յարիցիում, Բելոստոկում, Աստրախանում, և այլուր:

Չկայ այսօր ամբողջ Ռուսաստանում մի վայր, մի սեղիւն, որ ողորուած չը լինէր դահիճ կառավարութեան ձեռքով թափուած անմեղ ժողովրդի արիւնով: Մինչև վերջին ժամակները, սակայն, Աստրախանը մի բողոքաւոր բացառութիւն էր կազմում: Այդ հանգամանքը ի հարկէ չէր կարող վերպել Պետերբուրգի օպրիշնիկների ուշադրութիւնից և ահա մեր «լիբերալ» նահանգապետը կանչուած է Պետերբուրգ, ուր որոշ ներշնչումներ ու հրահանգներ ստանալով՝ վերադառնում տեղս, իսկ քիչ յետոյ արգէն տեղի ունենում մայիս 28-ի պատմական արիւնահեղ զէպը:

Սակայն ինչը սուրիմ տուեց Աստրախանի սալախարակները ևս ներկելու անմեղ զոհերի արիւնով: Պատմենք եղելութիւնը:

Մայիսի 28-ին, կիրակի երեկոյեան, Արքեանդրեան այգում նշանակուած էր սովորական միտինգ, որը գրաւել էր ահագին բազմութիւն: Երաժշտական դարեանդակից սկսեցին իրար յաջորդել խօսել զանազան հռետորներ, իրենց նիւթ ունենալով գլխաւորապէս Պետական դուժան, բիւրոկրատիայի բռնած դիրքը և ապագայում ծագելիք բարդութիւնները: Խոնարհ հազարաւոր ամբոխը խորին ուշադրութեամբ հետևում էր հռետորների ասածներին՝ ամբողջ ժա-

մանակ օրինակելի կարգապահութիւն պահպանելով: Միտինգների վերջում յանկարծ անսպասելի կերպով յայտուեց ոստիկանապետը և փորձեց խանգարել ժողովը: Բայց վճռովուած ամբոխը թող չտուեց նրան այդ անել և «կորչի ոստիկանութիւնը», «կորչի ոստիկանապետը» բացականչութիւններով, հրելով, հեռացրեց նրան այգուց: Ժամը 9-ին միտինգը առանց որ է միջադէպի վերջացաւ և ժողովուրդը խաղաղ կերպով սկսեց ցրուել, բայց այդ բոլորին յանկարծ ներս խուճեցին այգին, ոստիկանների մի ստուար խումբ, իրենց գլուխ ունենալով մեր «բարի» ոստիկանապետ Բախմանենովին: Միաժամանակ այգու զանազան կողմերից լսուեցին պրօվօկատորական մի քանի աւրձանակի պայթոցներ, որից անմիջապէս յետոյ ոստիկանները աւրձանակներից երկու զալպեր տալով, մեր կացրած սրերով յարձակուեցին ամբոխի վրայ և սկսեցին աջ ու ձախ հարուածներ հասցնել: Սարսափահար ժողովուրդը իրար կոխկրտելով՝ սկսեց վազել այգու զանկերը, բայց այդտեղ նրա առաջը կարեցին կողակների երկու հարեւրեակներ, որոնք անխնայ կերպով սկսեցին ծեծել և հարուածել սրերով, չինսյիւղով նոյն իսկ կանանց և երեխաներին: Ուշ գիշերին միայն երբ այգին և Վատակայ փողոցները մարտեցին ժողովրդից՝ կողակները դադարեցին իրենց քաջարուցից ժողովրդից վիրաւորուած են մօտ 40 հոգի, որոնցից 16 հոգին ծանր: Իսկ ոստիկաններից և կողակներից միայն մի քանիսը թիթե վէրքեր են ստացել ամբոխի նետած քարերից:

Արիւնահեղ այդ զէպը եկաւ մի տելուրդ անգամ ևս ցոյց տալու, որ բիւրոկրատիան անուղղելի է, որ նա միշտ եղէ և ժողովրդի թշնամին ու այգպէս էլ կմնայ, եթէ միայն ժողովուրդը և ամենից առաջ նրա պրօլետար-բանուոր դասակարգը օր առաջ չանցնի իր ներկայ հայցողական դիրքից յարձակողականի և չը բարձրացնի ընդհանուր զինուած ապստամբութեան դրօշը, որին վերջ ի վերջոյ յանգելու է ռուսական արդի ազատագրական շարժումը:

Mars

ՅՈՒՆԻՍ 1 (հ. տ.) 1906

ԱՍՏՐԱԽԱՆ

### ՄԻՋՆԱԿՈՒՍԱԿՑԵԿԱՆ ԽՆԳԻՐՆԵՐ

Հնչակեան և Գաշակցական զինուորների մէջ խռովութիւնը, զժբախտաբար, մի տեսակ պարբերական բնաւորութիւն էր ստացել Վ. Երջանի մէջ,— տեղի կին ունեցել միջնակուսակցական ապանութիւններ, վիրաւորումներ և որիչ այլ զկայքեր, որոնք բնաւ պատիւ չէին կարող բերել Հայ Յեղափոխական Գործի զինուորներին:

Որպէսզի այդ բոլորին միանգամ բնից միշտ վերջ տրուէր, Հնչակեան Ե. Պատգամաւորական Ժողովը, հայ Յեղափոխութեան շահը միայն այցի առաջ աննայով, հոկտ. 27-ին 1905, մի պաշտօնագրով առաջարկել էր Հայ Յեղափոխական Գաշակցութեան Արեւմտեան Բիւրօյին՝ որ նա էլ իր կողմից միջոցներ ձեռք առնէր եղբայրսպան այդ կուսին վերջ տալու Յայտաբարելով միաժամանակ, որ Հնչակեան կուսակցութիւնը իր կողմից հնարաւոր ամէն կարգապահութիւն արգէն արած էր և իր պատասխանատու մարմիններին յանձնարարաւ,

որ ամեն կարելի միջոցներ ձեռք անսուկին՝ եղբայրսուպար չարիքն արժատախիլ անելու:

Հայ Յեղափոխական Գաշնակցութեան Արևմտեան Բիւրօն, նոյ. 4. ին 1905, պատասխանում է Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Արշուիթեանը, յայտնելով որ իրենց խորապէս ցաւում են Ղ. ի շրջանի մէջ տեղի ունեցած ողբերգական և Յեղափոխութիւնը արատաւորոյ սպանութիւնների մասին, յայտարարելով միամտամանակ թէ իրենց համոզում են որ Գաշնակցութեան կողմից տեսնուող մարմինները արդէն բոլոր միջոցներ ձեռք են տանել վերջ գնելու այդ եղբայրսուպան ընդհարումներին, որոնք չէին կարող քաջալերութիւն գտնել իրենց կազմակերպութեան մէջ:

Արևմտեան Բիւրօն զրա հետ խոստանում է Հրնչակեան պատգամատուրական Ժողովը արտաբարտած ցանկութիւնը հաղորդել Արևելեան Բիւրօնին, յոյս առնելով որ Հնչակեան մարմիններն էլ անկեղծօրէն միջոցներ ձեռք կառնեն այդ մեկնոյնը իրագործելու:

Հայ Յեղ. Գաշնակցութեան օրդան «Գրօշակն» էլ իր թիւ 12-ի մէջ—նոյ. 1905—«Ազգաբարձութիւն» կոչով արձագանք տուեց Արևմտեան Բիւրօնի իր ձեռքին այսպէս.

«Կովկասեան մեր մարմինները հաղորդում են մեզ մի քանի ցաւալի ընդհարումների և նոյն իսկ լսպանութեան զկարգերի մասին Զ. ի շրջանում կուսակցական հօդի վրայ:

«Թաղանջով ուրիշ կազմակերպութիւնների վրայ իրենց արարքներէ ամբողջ պատասխանատուութեան ծանրութիւնը՝ մենք մեր կողմից պարտք ենք համարում յայտարարել հետևեալը:

«Յ. Գաշնակցութիւնը որ ընաւ որամպիր չէ վատ գասեր առնելու ուրիշներից, միշտ անխնայ է եղել զէպի Յեղափոխական զրօշակն անարգող անհասները և առանց վարանումի զուրօ է շարտել այդպիսիներին իր շարքերից: Դա մի հրամայական պահանջ է ամեն մի կազմակերպութեան համար, եթէ միայն սա չէ ուզում ինքնասպանութիւն գործել: Գաշնակցական անպաճկերը պէտք է ամեն կերպ խոյս տան աշինհեղութիւնից՝ անզամ ամենասուր պրօօփօկացիան երբ հանդէպ, այլև յեղափոխական հմայքը վտանգող ամեն տեսակ արարքներից:

«Ազգակերպութեան կանոնադրութիւնը, ինչպէս և ընդհ. Ժողովի ընդունած որոշումները՝ թելադրում են ամենախիստ վերաբերմունք և նոյն իսկ ծանր պատիժ այն անձանց զէմ, որոնք իրենց թոյլ են տալիս զաւճանել յեղափոխական գաղափարին և Գաշնակցութեան սկզբունքներին»:—Յ. Գ. Արևմտեան Բիւրօն:

Փոխազարէ հաղորդարութիւններից և հրապարակային այս յայտարարութիւնից յետոյ՝ Սօխումի մէջ սպանում է, զաշնակցականների ձեռքով, Հնչակեան «Սիրելի Գաշնակ» զինուորը:

«Գաշնակցականների զինուած խմբային մի յարձակում էլ տեղի է ունենում «Խնձորէսկ», Հնչակեան դիւղի վրայ,—այդտեղ էլ սպանութիւններ և վիրաւորումներ: Դեռ մի կողմ ենք թողնում զաշնակցականների զինու հալածանքը Հնչակեաններին զէմ կովկասի գանազան դիւղերում, և քաղաքներում. իսկ թէ ինչ ցաւալի դիրք են բռնել և ինչ են արել զաշնակցականները Հնչակեանների վերաբերմամբ Տաճկաստանի մէջ,—այդ մասին լը-

նութեամբ ենք անցնում:

«Պարօկաստանի մէջ զաշնակցականները տեղի առաջ են գնում կանխագծուած մի ծրագիր իրագործելու համար, զաշնակցական 80-86 զինուորներ՝ իրենց խմբագրութիւններով միասին՝ փետրուար 11-ին (հ. տ.) 1906, յարձակում են «Փոյաշուկ» զիւղի վրայ, Էպատակ ունենալով այնտեղից բոլորովին զուրօ քչել Հնչակեան զինուորներին: Այդտեղ էլ բացի վիրաւորումներից՝ սպանում են երկու Հնչակեաններ: «Հնչակեան» Կուսակցութեան Կեդրոնական Արշուիթիւնը՝ առաջնորդելով միայն և միայն Հայ Յեղափոխական շահի տեսակետից, անցեալ ապրիլ 16 ին, ըրահանգում է Ռուս. և Արդի Հնչ Մասնաճիւղերի Գործ. Յանձնախմբին անմիջապէս յարաբերութեան մէջ մտնել Արևելեան Բիւրօն հետ և միջնակուսակցական խառն ժողով գումարելով՝ խորհիլ և ազգու միջոցներ ձեռք առնել եղբայրսուպանութեան առաջն առնելու համար:

Սալմաստի ցաւալի զէպերից յուզուած, ինչպէս և այն հանգամա՝ քից որ Հնչակեան զինուոր Գաւիթը օրը ցերեկին, մարտ 13 (հ. տ.) 1906, ծեծի է ենթարկում զաշնակցական զինուորներից՝ առանց իր կողմից որ և է պատճառ տալու,— այդ բոլորը աւելի են տալիս Հնչակեան զինուոր Մհեր Մանուկեանին (Գօշիցիի տէնօրներից մէկը) փողոցի մէջ բազաւարութիւն սեղելու՝ Թաւրիզի Գաշնակցական ներկայացուցիչ Պետրոս անուն անձից, այդ ժամանակ տեղի է սնենում խօսքով փոխազարէ վիրաւորներ, որի ընթացքում Մհեր Մանուկեանը ծեծում է Պետրոսին, մարտ 14-ին:— Հնչակեան Կուսակցութեան տեղական ներկայացուցիչը և մասնաճիւղի վարչութիւնը լսելով իրենց զինուորի արարքը, կանչում են նրան՝ յանդիմանում և երեք օրուայ բանտարկութեան գատապարտում, հաղորդելով այդ իրողութիւնը Թաւրիզի թեմական խորհրդին: Սակայն Գաշնակցութեան տեղական մարմինը այդ պատճից զոհ չմնալով՝ իր զինուորներին փողոցներն է լցնում մի քանի օր շարունակ՝ Հնչակեաններին վնասելու պիտուով:

«Յ. Գաշնակցութեան Արեւմտեան Կեդրոն. կոմիտէն՝ մարտ 18 (հ. տ.) 19 5, իրենց ընկերով ծեծուելուն համար բաց է թողնում մի շրջաբերական, որի մէջ ասում է. «Թաւրիզում մի քանի օր առաջ պատահած՝ խորին նողկանք ազդող՝ իրողութիւնը, կաւարուած յեղափոխական զիմակի ներքև թագնուած բաշիբօզուկների ինչ որ խմբակի կողմից, գալիս է միանգամ էլ (օրինակ, մեր շրջանում, մասնաւորապէս Սալմաստում, վերջերս կատարուած մի շարք ցաւալի ընդհարումների և նոյն իսկ սպանութեան զէպերը) ապացուցանելու բարոյական և յեղափոխական անանկութիւնը ենթերիներին այն խմբակցութեան, որի միակ զբաղումն ու գործը եղել է միշտ եղբայրսուպան կոիւնքի յարուցանելը ու արժարծելը:

«Անտրոնական կոմիտէն սրանով յայտարարում է ի զիտութիւն զաշնակցական ընկերների, թէ Յ. Գաշնակցութիւնը որ երբէք արամադիր չէ վատ գասեր առնելու ուրիշներից, միշտ անխնայ է եղել զէպի յեղափոխական զրօշակն անարգող անհասները և առանց վարանումի զուրօ է շարտել այդպիսիներին իր շարքերից: Դա մի հրամայական պահանջ է ամեն կազմակերպութեան համար, որ չի կամենում զէպի սնանկութիւն, զէպի ինքնասպանութիւն պիմել:

«Գաշնակցական ընկերները ընդհանրապէս և զինուորները մասնաւորապէս պէտք է ամեն կերպ խոս-

տան արհեստագործութիւնից, անգամ տանտնային արտա-  
 րարներին հանդէս, այլ յեղափոխութեան հմայքը և  
 հասարակութեան անդրադարձումը վտանգոյ ամեն տեսակ  
 արարքներէն: Այստեղ պիտի լինել միասնական, որ  
 կազմակերպութիւնը գիտէ հարկաւոր դեպքերում պատշա-  
 ճաւոր և իր կանոնաւոր ճանապարհով պատմել այդ օրինակ  
 ժպիրէ գործերի իսկական հեղինակներին, որոնք պաշի-  
 ան զարթոցանելու նորա իրաւացի զարթոյթը և, քանի-  
 քանի անգամներ լինելով, փորձելու նրա երկար համ-  
 բերութիւնը: (»ԳՐՕՇԱՎ« Թիւ 5, 1906)

»Այլ տեսանի կենտ. կօմիտէ« ի յրջաբերականի մօտաւոր  
 բովանդակութիւնը կրող յի գրութիւն է հրատարակ-  
 ունց Գոչնակցութեան կօմիտեան օրգանի մէջ:

Ապրիլ 27-ին (հ. տ.), Հ. Յ. Գաչնակցութեան  
 Արևմտանի կենտրոնական կօմիտէի որոշմամբ Մհեր Մա-  
 նուկեանը աեռ ճի է երթարկում, ուստաց հիւպատոսա-  
 րանի առաջ:

Մհերի սպանութեան լուրն առնելով՝ Հրն-  
 չակեան կուս. կեդրոնական Աւարչութիւնը Պարսկաստանի  
 և այլ տեղերի Հնչակեան Մանաճիւղերին հրահան-  
 դում է հետո միայն վրէժխնդրական գզացումից, միա-  
 ժամանակ յանձնարարելով Ռուսաստանի և կօմիտեի  
 Հնչակեան Մանաճիւղերի Գ. րծ. Յանձնախմբին փու-  
 թացնել Արևելեան Բիւրօի հետ սկսած բանակցու-  
 թիւնները և որոշել մի եզրակացութեան յանգիլ:

Ռուս. և կօմիտեի Հնչակեան Մանաճիւղերի Գ. րծ.  
 Յանձնախմբը, Յունիս 6-ին 1906, պատասխանում է  
 »Չեր թիւ 222 նամակի հիման վրայ մենք անմիջա-  
 պէս զիմեցինք Գաչնակցութեան Բիւրօին և նրանց կող-  
 մից երկար ձգձգումից և լուսթիւնից յետոյ՝ ունեցանք  
 մի ժողով, որը առանց եզրակացութեան յանգելու փակ-  
 ունց:»

Այս ցաւալի իրագործիւնները հասարակական դա-  
 տառասնին յանձնելով՝ կը յուսանք թէ Գաչնակցու-  
 թեան պատասխանաբար մարմինները վերջապէս կաշխա-  
 տին յարգել իրենց կօնքերը և յանձնառութիւնները,  
 պատմելով իրենց յանցաւոր ընկերներին և միաժամա-  
 նակ ազգու միջոցներ ձեռք առնելով իրենց կողմից ևս  
 եղբայրասպանութեան վերջ տալու համար:

Որքան որ թանկագին և անփոխարինելի լինեն  
 եղբայրասպանութեան դո՛ւր զնացած մեր նահատակ ըն-  
 կերները, այնուամենայնիւ Հայ Յեղափոխական Գ. րծի  
 մօտաւոր և հեռաւոր շահը աչքի առաջ ունենալով, Հրն-  
 չակեան կուսակցութեան կեդր. Աւարչութեան օրտապին ցան-  
 կութիւնն է, որ եղբայրասպանութիւնը վերջ ոտանայ, և  
 արիւնը արիւնով շրջացուի, և հէնց զրա համար է կեդ-  
 րոնը երկայնմտութիւն ունեցաւ նորից բանակցութեան  
 մէջ մտնելու Հ. Յ. Գաչնակցութեան պատասխանաբար  
 մարմինների հետ, որական մի կարգադրութեան յանգե-  
 լու նպատակով:

Յուսով ենք որ մեր ջանքերը ի գերե շնն ելնեն:  
 Արդիւնքի մասին իր ժամանակին կը յայտնենք:

**ՊԵՏՐՈՎԳՐԱԴՆԻ ԽՆԴԵՐ**

Օրմանեան պատրիարքը նորից հրատարակելու կամէութիւն  
 է ցոյց տուել, որովհետեւ թիւրք կառավարութեան կողմից իրեն  
 նշան խոստումները չեն կատարուած,  
 Կառավարութիւնը խոստանում է գոհացում տալ ու պատ-  
 րիարքն էլ էր հրատարակում, զիտարութիւնից յետ է կանգ-  
 նում. սպասում է որ կառավարութիւնը պաշտօնապէս  
 և՛ զրաւոր կերպով իր խոստումները հաստատի, եթէ ոչ պի-

տի հրատարակ...  
 Օրմանեանը և չամիլը նոր չէ. այլ վաղուց է որ նրանք  
 մի երկար կառավարութիւն են սկսել խաղալ ի հաշիւ և  
 ի վնաս հայ ժողովրդի ու հայ դատի:  
 Եթէ Օրմանեանը նոր շքանշանների աչք ունի, դա ու-  
 ղիշ խնդիր է, իսկ եթէ նա իրեն թող է տալիս իր գոր-  
 ծերը վարագործելով խօսելու հայ ժողովրդի շահերի ամուսնով  
 դա նրան այլևս ներքի չէ, որովհետեւ եթէ Օրմանեանը ա-  
 մենափոր չափով զիտակցութիւն ունեցած լինէր հայ ժողովրդի  
 շահերի մասին, մինչեւ ցարդ տասն անգամ հրատարակած պիտի  
 լինէր, առանց իր խաւարային գործերը կատարելու: Այդպէս  
 կանէր, շատ ու քիչ պարտականութեան զիտակցութիւն ու-  
 նեցող մի պատրիարք: Բայց Օրմանեան ո՛ր, ազնուութիւն ո՛ւր:  
 Նա միայն խաղեր գիտէ խաղալ և խաղերի էլ մէջ է  
 շարունակ:

**»ԵՐԻՏԱՍԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ«**

**ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 ԱՄԵՐԻԿԱՅԻ ՕՐԳԱՆ**

**Յ Ե Ր Ե Թ Ա Թ Ե Ր Թ**

**ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ**

**ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ  
 ՀԱՄԱՐ 8 ՔՐԱՆԿ:**

Բաժանորդագրուիլ ցանկացողները պիտի  
 դիմեն Ամերիկայի Հնչակեան Մանաճիւղերի Գոր-  
 ծագիր Յանձնախմբին հեռուէն Հասցէով:

M. LAMBERT

199, P. O. Box M. S.  
 New-York (U. S. A.)

Ռուսաստանից՝ յարմարութիւններ չունեցող տե-  
 ղերը՝ բաժանորդագրուիլ կարող են կեդրոնի միջոցով:

**Վ Ր Ի Պ Ա Վ**

Թիւ 5 «Հնչակի» նուիրատուութեան ցանկի մէջ, Կուսակ-  
 ցութեանս կողմնակաւ գանձարանում ստացուած Եւայլայի  
 մ-դից. 400 Փ. ի փոխարէն՝ Գրուած է 400 ը.

**Կուսակցութեանս ԿԵՐՐՈՇԱՎԱՆ Դանձարանում  
 ստացուել են հետևեալ դամարները. —**

|                      |   |   |   |               |
|----------------------|---|---|---|---------------|
| ԳԵՏԱՐԵՐԱՆԻ Մ-դից     | — | — | — | 528 Փ. — սանտ |
| ԹԵՂԵՐԱՆԻ             | — | — | — | 500 " — "     |
| ՀԵՂԵՂԻ               | — | — | — | 61 " 80 "     |
| ԱՐԵՂԱՆԻ              | — | — | — | 137 " 30 "    |
| ՊՐԱՆԻՓՕՐՏԻ           | — | — | — | 2510 " — "    |
| ԼՆՆԻ                 | — | — | — | 307 " 40 "    |
| ՊՐԻՓՕՐՏԻ ընկերներից  | — | — | — | 111 " 75 "    |
| ԿՈՎԱ. «ԿԵՐՐՈՇԱՎԱՆԻՑ» | — | — | — | 1325 " — "    |
| ԵՍՅԱՅԻ Մ-դից         | — | — | — | 250 ը.        |

Գրամ, մանդատ և այլն ուղարկել. —

M. BELLART — 7, Rue Campagne-Première 7,  
 (France) PARIS.

Imprimeur-Gérant Gabriel FARJAT.